

# Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ծնվել է 1976 թ. հոկտեմբերի 17-ին Երևանում:

1983-93 թթ. սովորել է մայրաքաղաքի Ա. Չեխովի անվան թիվ 30 միջնակարգ ռուսական դպրոցում:

1993-99 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1999 թ. մայիսի 24-ին՝ Հոգեգալստյան տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Տ. Ռուսկան արքեպս. Գալփաքյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1999 թ. Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի (այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ) պնօրհնությամբ նշանակվել է ծառայության Մայր Տաճարի թանգարանում: Այնուհետև 2000 թ. ծառայության է նշանակվել Ալեք և Մարի Մանուկյան գանձատանը:

2000 թ. դեկտեմբերի 28-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայ Եկեղեցու և պետության փոխհարաբերությունները խորհրդային փարիներին (1920-1954 թթ.)» թեմայով:

2001 թ. փետրվարի 20-ին, ձեռամբ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2001 թ. սեպտեմբերի 1-ից Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր պնօրհնությամբ նշանակվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մկրտարանի հոգևոր տեսուչ:

2004 թ. հուլիսի 1-ին նշանակվել է Արագածոտնի թեմի Օշականի հովվության հոգևոր հովիվ:

2005 թ. փետրվարի 1-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր պնօրհնությամբ նշանակվել է Կոտայքի թեմի Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ:

2005 թ. օգոստոսի 2-ին պաշտպանել է վարդապետական թեզը՝ «Խրիմյան Հայրիկի կրոնա-եկեղեցական գործերը» թեմայով: